Ֆրանսիան կոշտ մրցակցություն է վարում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 14.04.2024թ.

12.04.2024 թ. հայտնի դարձավ, որ Սերբիան պաշտոնապես հրաժարվել է իր բանակի համար գնել ռուսական MiG29 կործանիչներ՝ առաջնությունը տալով *Dassault Aviation-ի* կողմից արտադրված ֆրանսիական *Rafale-ների*: *Associated Press-ի* փոխանցմամբ՝ Փարիզում արդեն տեղի են ունեցել բանակցություններ՝ Սերբիայի նախագահ Ա. Վուչիչի, Ֆրանսիայի առաջնորդ Է. Մակրոնի և արտադրող ընկերության ղեկավարության միջև, որի արդյունքներով երկու ամսվա ընթացքում պայմանագիր կկնքվի: Խոսքը 3 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ 12 միավոր *Rafale* կործանիչների մասին է:

Միևնույն ժամանակ, Վուչիչը հիմա համառորեն համոզում է հանրությանը և լրատվամիջոցներին, որ այս ընտրությունը պայմանավորված է կործանիչների սպասարկման և վերանորոգման տեխնիկական խնդիրներով, և որ այստեղ պետք չէ որևէ քաղաքական երանգ փնտրել: Սակայն փաստն այն է, որ Սերբիան այս քայլով ոչ միայն զրկեց ՌԴ-ին զգալի գումարներ աշխատելու հնարավորությունից, այլև սկիզբ դրեց իր երկրի բանակի անցմանը ՆԱՏՕ-ի սպառազինությանն ու չափանիշներին:

Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա հայտարարված պայմանագիրը ևս մեկ մեծ ձեռքբերում կլինի Ֆրանսիայի ռազմարդյունաբերական համալիրի համար: Տվյալ փուլում այս երկրի գրեթե ողջ ՌԱՀ-ը աշխատում է շուրջօրյա ռեժիմով: Դա պայմանավորված է հիմնականում երեք գործոններով, որոնք են՝ որակը, ուկրաինական ռազմաճակատի պահանջարկը և հայրենական արտադրանքի քաղաքական լոբբինգը: Եվ, հատկապես, վերջին կետը վճռորոշ դեր ունի ֆրանսիական արտադրանքի հաջող իրացման համար: Փարիզը բառացիորեն «իրարհաջորդ պայմանագրեր է կնքում»՝ խելամտորեն ճնշման բարդ սխեմաներ կիրառելով հաճախորդների և մրցակիցների նկատմամբ: Ընդ որում, եթե խոսքն այն գործարքների մասին է, որոնցից դուրս են մնում Ֆրանսիայի նկատմամբ ոչ բարեկամական երկրները, Փարիզի օգուտները դառնում են կրկնակի: Այսպիսով, վաղ գարնանը ֆրանսիական կառավարությունը եվրոպական կառույցներում հաջող քաղաքական քայլ արեց՝ իր համաձայնությունը տալով Կիևին Ուկրաինայի ԶՈՒ-ի կարիքների համար ֆինանսական օգնության հերթական քառասուն մլրդ դոլարի փաթեթի հաստատմանը՝ այդ գումարով Թուրքիայից հրետանային արկեր գնելու Եվրախորհրդի արգելքի դիմաց: Արդյունքում, Ուկրաինան ստիպված եղավ շարունակել զինամթերք գնել եվրոպական երկրներից և հիմնականում հենց նույն Ֆրանսիայից, չնայած, որ թուրքական գործարանները կարող էին լրացնել ուկրաինական ԶՈՒ-ի արկերի ներկայիս աղետալի պակասը, սակայն այժմ պարապուրդի են մատնված:

Այս լույսի ներքո հետաքրքիր է ևս մեկ լուր. 20.02.2024-ին հայտնի դարձավ, որ Հնդկաստանի ՊՆ-ին պատկանող *Hindustan Shiryard Limited* նավաշինական ընկերությունը խզել է օժանդակ նավերի նախագծման համար թուրքական ընկերության հետ նախկինում կնքված պայմանագիրը և թուրքական կողմին իսպառ բացառել Հնդկաստանի ՌԾՈՒ-ի նավատորմի 5 օժանդակ նավեր կառուցելու ծրագրից:

Հնդկական լրատվամիջոցներն այս որոշումը կապեցին քաղաքական գործոնների և, մասնավորապես, Հնդկաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված Պակիստանի հետ Թուրքիայի դաշնակցային հարաբերությունների խնդրի հետ: Սակայն, եթե հաշվի առնենք մի շատ նշանակալից իրադարձություն, ապա պարզ կդառնա, թե ինչու է Նյու Դելին իրականում չեղյալ հայտարարել այս պայմանագիրը: Ի վերջո, դրա կնքման պահին Թուրքիան և Պակիստանն արդեն դաշնակցային հարաբերությունների մեջ էին, ինչը նշանակում է, որ հնդկական մամուլի վարկածը չափազանց թույլ է հիմնավորված: Բանն այն է, որ հունվարի 24-ին՝ հնդկա-թուրքական պայմանագրի խզումից գրեթե մեկ ամիս առաջ, Հնդկաստան էին ժամանել Է. Մակրոնի գլխավորած ֆրանսիական պատվիրակությունը, որի կազմում էին Ֆրանսիայի ԶՈՒ-ի բարձրաստիճան սպաներ և ֆրանսիական պաշտպանական ընկերությունների ղեկավարներ: Բանակցությունների արդյունքում կողմերը մի շարք ծավալուն պայմանագրեր են կնքել՝ Նյու Դելիի կողմից ֆրանսիական զենքի արտադրանքի գնման և մի շարք բարձրտեխնոլոգիական սպառազինությունների համատեղ արտադրության համար: Այս համատեքստում հիշատակվում էին տարբեր նշանակության սուզանավերի ու ռազմանավերի կառուցման մասին պայմանավորվածությունները:

Այս տվյալները նկատի ունենալով՝ դժվար չէ կռահել, թե հնդկական կողմը ում է վստահել իր ՌԾՈՒ-ի, ի դեպ, Հնդկաստանի Հանրապետության ԶՈՒ-ի՝ թե՛ որակական, թե՛ քանակական առումներով, միակ թույլ օղակի համալրումը:

Այդ կերպ, Ֆրանսիան վերջնականապես համաշխարհային շուկաներ զենք արտահանող երկրների շարքում ԱՄՆ-ից հետո վարկանիշային երկրորդ տեղն է գրավում: Այն մի երկիր է, որի ամուր դիրքերը թույլ են տալիս նաև մրցակցային պայքարում քաղաքական և տնտեսական վնաս հասցնել իր աշխարհաքաղաքական մրցակիցներին: Հնարավոր է, որ ֆրանսիական ՌԱՀ-ում վերջին մեկ տարվա ընթացքում նկատված բեկումը մեծապես պայմանավորված է նաև Միացյալ Նահանգների «փոխհատուցող» աջակցությամբ, այն բանից հետո, երբ՝ AUKUS-ի (ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ավստրալիայի եռակողմ պաշտպանական դաշինք) ճնշման ներքո անցյալ տարվա գարնանը Կանբերան հրաժարվեց Ֆրանսիայի հետ Ավստրալիայի նավատորմի համար նորագույն տեսակի սուզանավերի կառուցման մեծ պայմանագիր կնքել: